




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3934

11185

664.8

Z-44

2011

664.8
2-44

48

Holakian

ԶԱՄԻՉԻ

ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Գրեց՝

Ֆ. Ք. ՀԱՌԻԸՐՏ

Հայացուց՝

ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

1923

ՖՐԷՋՆՕ, ՔԱԼԻՖ.

Սիրելի Այգեպան,

Շատ դժբաղդ պարագայ մըն է որ Ընկերութեան
և քու միջև չէ ստեղծուած այն սերտ յարաբերութիւ-
նը, ինչ որ պէտք էր ըլլալ:—

Երկու պատճառներ կան ասոր.

Մէկը՝ այնպէս տպաւորուած ես թէ դուն ու Ըն-
կերութիւնը երկու տարրեր մարմիններ էք, մինչդեռ
իրականութիւնը ասոր հակառակն է: Ընկերութիւնը
և այգեպանը իրարու լրացուցիչներ են: Ձեր շահը
մէկ է. ձեր նպատակը մէկ է. հետեւապէս՝ դուք մէկ
մարմնոյ անդամներն էք:

Երկրորդը. կարգ մը անպատասխանատու եւ բը-
նութեամբ յոռտես անձինք միշտ հակառակ խօսեր են
ընկերութեան հասցէին եւ քեզ հեռու պահեր: Ասոր
հետ նաեւ զոհողութենէ վախճող ազահներ դուրսը մը-
նացեր են եւ իրենց այս անարդարանալի արարքը պար-
տըկելու համար քեզ ուժացնել ջանացեր են:

Այս ամսուան համար քեզի ներփակ կը զրկեմ Մր.
Ֆ. Բ. Հաուերտի հեղինակած մէկ կարճ պատմութիւ-
նը չամիչի անցեալին եւ մասնաւորապէս այս ընկերու-
թեան կազմութեան, որը վստահ եմ պիտի լուսարանէ
միտքդ, որոշ պիտի տեսնես անցեալն ու ներկան, տա-
րակոյս չունիմ, իբր խորհող մարդ՝ պիտի զննատես
այս Ընկերութեան անցեալ տասը տարիներու ջանքերն,
որ փրկեց չամիչի ճակատագիրը եւ պիտի լծուիս դոր-
ծին աւելի քան երբէք լեցուն հաւատքով թէ չամի-
չը պիտոյքի կարգը պիտի անցնի եւ քու ընտանիքիդ
սպազան պիտի ստանայ նախանձելի վիճակը:



2002

87640-42 161-97

ԶԱՄԻՉԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Քալիֆորնիոյ նահանգին կլիման մեծ ազդեակը ե-
ղաւ այլեւայլ դաւառներու մէջ զանազան պտուղի պար-
տէշներու մշակութեան: Այս ընդարձակ նահանգը
տարրեր տարրեր կլիմայ ունի: Երկրագործը իր ար-
տադրելիք պտուղը յարմարցուց կլիմային: Նահան-
գին կեդրոնական մասը յարմար էր ի միջի այլոց մաս-
նաւորապէս խաղողի արտադրութեան, եւ այս դաւառ-
ներու մէջ սկսաւ խաղողի եւ հետեւապէս չամիչի գոր-
ծը:

Չամիչի արտադրութիւնը սկսուել առաջին օրէն
իսկ իր դժուարութեան հանդիսեցաւ, շատ մը պատ-
ճառներու հետ մասնաւորապէս ժողովուրդին անձա-
նօթ ըլլալուն համար: Ծանօթացնել պէտք էր, եւ դըժ-
բաղդարար այս գործը ընկը մնացեր էր անկախ փէքը-
ներու ձեռք, որոնք փոխանակ հաւատարմօրէն գոր-
ծադրելու, աւելի շատ միջոցներ հնարեցին այգեպա-
նէն աժան գնելու: Ասով թէ այգեպանը չքաջաւեր-
ուեցաւ, որ ընդարձակէր այգիները եւ թէ չամիչը
շատ սահմանափակ շուկայի մը մէջ մնաց:

Այգեպանին այս յուսահատական եւ անդոհացու-
ցիչ վիճակին հետեւեցաւ կազմակերպութիւն մը յա-
ռաջ բերել եւ ջանալ լաւագոյն գին առնել:

1892ին կազմուեցաւ առաջին մ.գրմինը: Երկար
կեանք չունեցաւ, տապալեցաւ, ասոր յաջորդեց ուրիշ
մը, յետոյ ուրիշ մը, բայց, կամ մատակարարութեան
կարողութիւն եւ կամ այգեպանին համագործակցու-
թեան գաղափարին ըմբռնումի պակասութեան համար

3934

ամբողջ քսան տարի, այն է 1912, հաստատուն եւ գործօն մարմին մը երեւան չեկաւ :

Ամենէն վերջինը որ կատարելութեան ամենամօտիկն էր RAISIN EXCHANGE (ՉԱՄԻՉԻ ՍԱԿԱՐԱՆ) կոչուածը : Աս ալ ինք չէր որ արտադրութիւնը ուղղակի շուկայի վրայ պիտի գնէր . այլ միայն անհատ աղետները իրենց կը յանձնէր . իրենք ալ տեղական գրանդներուն կը ծախէին եւ գրամը կը վերադարձնէին աղետներին : Այս կազմակերպութեան կը պարտինք մէկ բան որ բերրի կամ անբերրի աղբիւրու յատակազները պատրաստեց եւ որը շատ օգնեց ներկայ SUN MAID RAISIN GROWERS-ին, որ 1912ին կազմուեցաւ, եւ լուծումը եղաւ չամիչը ինք շուկան գնելու «Գորդեան Հանդոյցին» :

Այսօր 14,000 աղետներն ընկերակցած են այս կազմակերպութեան : Ինչպէ՞ս սկսաւ եւ ինչ հիմնուել վրայ . կ'արժէ վայրկեան մը անդրադառնալ :

Քսան տարիներու անյաջող փորձերը երկու կենսական փորձառութիւններ սորվեցուցեր էին :

ա. — Չամիչի արտադրութեան սպառումը առնել չահագործող փէքրին ձեռքէն եւ անձամբ դնել շուկայի վրայ . միանգամայն ամէն միջոց գործադրել զանիկա ժողովուրդին ծանօթացնելու :

բ. — Ասիկա իրագործելու համար չօշափելի դժբաժնուի մը յատա՞յ բերել, որը բաւական ըլլար թէ աղետներին նախադուժար մը վճարելու եւ թէ սպառումի ծախքերը հոգալու :

1912ին աղետներն, Ֆրէզնոյի առաջնակարգ առեւտրականներ եւ 1910էն ի վեր գոյութիւն ունեցող այս RAISIN EXCHANGEը մէջտեղ եկան, երկար խորհրդակցութիւններէ վերջ որոշեցին կազմել «Մէկ

Միլիոն Տոլար» ընկերութիւնը : Երկու հազար աղետներ արդէն էքսչէնճի անդամներն էին եւ միացան այս նոր ձեռնարկին :

Որոշուեցաւ որ մինչեւ որ այդ «Մէկ Միլիոն»-ի գոնէ երեք հարիւր հազարը չգոյանայ, ոեւէ ձեռնարկ չընեն շուկայ ելնելու : Ասոր համար որոշուեցաւ որոշ ժամանակ մը : Գործի մտան : Դրամը գոյացնելու համար որոշեալ պայմանաժամէն առաջ արդէն գոյացած էր եւ կազմակերպութիւնը գործի սկսած :

Որպէսզի յամեցումի եւ ուրիշ արդեւքներու չհանդիպի այս կազմակերպութիւնը, աշխարհադրական դիրքով բաժնուեցաւ հինգ գաւառակներու կամ հովիտներու, որոնց իւրաքանչիւրը իր աղետներուն քուէով որոշեց իր ներկայացուցիչը հինգ քուէի իրաւունքով, կամ ընդ ամէնը քսան եւ հինգ քուէ : Ասոնք կոչուեցան խնամակալներ եւ կազմեցին այս հսկայ համագործակցականը : Ասոնց պայմանաժամ որոշուեցաւ եօթը տարի, մինչեւ 1919 : Որուն լրանալէն վերջ ներկայացուցիչներու թիւը իւրաքանչիւր հովիտի համար բարձրացաւ վեցի կամ ամբողջ թրքաթիւներու թիւը եռեսունի :

Բաժանորդագրուող աղետները կամ առեւտրականը պիտի ունենար վկայական մը խնամակալութեան ստորագրութիւնը կրող, որը պիտի հաստատէր բաժնետիրութիւն եւ չահու մասնակցելու իրաւունքը : Եօթը տարի վերջը այս վկայականը պիտի վերադարձուէր խնամակալութեան եւ փոխարէն պիտի ստանար Ընկերութեան չահաբաժնի թուղթը :

Փոխանակ բոլոր բաժնետէրերու ամէն հարցի շուրջ քուէներու ժողով գումարելու, որը անգործնական — երբեմն անկարելի եւ միշտ ժամանակի կորուստ էր, եւ մանաւանդ ատիկա բացուածք մը պիտի թողուր բա-

ժիններ դուրսը ծախուելու եւ ասով դուցէ օր մը բոլորովին դրսեցի ոչ-անդամներու բաժին գնելով ընկերութեան տիրանալուն, ընդունուեցաւ եւ ընդունուած է VOTING TRUSTի (խնամակալութիւնը ինք կը քուէարկէ ի դիմաց իր հովիտին այգեպաններուն) կերպը:

Երբ պահանջուած երեք հարիւր հազարը ձեռք եկաւ, եւ գործի սկսուեցաւ, ուրիշ ճշմարտութիւն մը երեւան եկաւ, չուկայի վրայ գինը կարենալ պահելու համար այգիներու խոշոր տոկոսի մը պէտքը կար: Ուստի 1912 Դեկտ. 1, քէմփէյն մը սկսաւ, որը Ապրիլ 1-ին վերջացաւ եւ մինչդեռ Ընկերութիւնը վաթսուն առ հարիւր անդամակցութիւն կը սպասէր, արդիւնքը ցուցուց որ եօթանասուն եւ վեց առհարիւր անդամակցեր էին արդէն, եւ երեք հարիւր հազար տոլարի բաժանորդագրութիւնը բարձրացած էր ութը հարիւր հազարի եւ Ընկերութեան անունը եղաւ CALIF. ASSOCIATED RAISIN CO. եւ չամիչի որակը կոչուեցաւ «SUN MAID»:

Առաջին գործը եղաւ այգեպանին ձեռքը մնացած 25,000 թըն չամիչը գնել $2\frac{3}{4}$ սէնթի փառնտը. մինչդեռ դրսի փէքըրը միայն $1\frac{3}{4}$ սէնթ կը վճարէր եւ ան ալ իր ուզած քանակութեամբ կը գնէր: Ընկերութիւնը վստահութեամբ գնեց, որովհետեւ գիտէր թէ իր ետեւը ունի այգեպաններու մեծագոյն տոկոսը, որոնք համագործակցութիւն որոշեր էին:

Առաջին դժուարութիւնը իր առջեւ ելաւ ֆէքիւկ Հաուզի չգոյութիւնը: Տասնեւչորս փրքրներու տեղերը վարձեց, պայմանաւ որ իր ձեռքը եղած չամիչը ինք պիտի ծախէ իր անունովը, եւ իւրաքանչիւր թընի հինգ տոլար պիտի վճարէ փէքրին իրր վարձք տեղին գործածութեան համար:

Երկրորդ դժուարութիւնը որ ելաւ էր. 1912էն մընացած 25,000 թընին վրայ եկաւ 1913ի 60,000 թընը, եւ ասոնց պէտք էր վճարուէր իրր կանխավճար $3\frac{3}{4}$ սէնթ, եւ ասիկա կը կարօտէր երեք միլիոն տոլարի:

Թէեւ մէկ միլիոն տոլար գոյացած էր, բայց ասոր մինակ երեք հարիւր հազարը կանխիկ էր, իսկ մընացած եօթը հարիւր հազարը ֆօք, որոնք դրամատուներու առջեւ կարեւոր արժէք մը չէին ներկայացներ:

Ընկերութիւնը ձեռքը ունեցած չամիչին վրայ յաջողեցաւ այդ դրամը հանել տեղական եւ Սան Ֆրանսիսքոյի դրամատուններէն: Այդ տարին չամիչը ծախուեցաւ, եւ այգեպանին տրուեցաւ չորս հարիւր հազար տոլար աւելի, քան ինչ որ կ'ակնկալուէր:

Միջին հաշուով տարեկան 70,000 թընէն գրեթէ միշտ 20—30,000 թըն չէր ծախուեր եւ փէքըրը ասիկա այգեպանին ձեռքէն կ'առնէր իր ուզած գնովը եւ ուզածին չափ: Այս կերպով չուկան կը լեցնէին, այնպէս որ նոր հունձքին տեղ չկար ծախելու եւ ասիկա կրկին պատեհութիւնը կը ստեղծէր այգեպանը զրկելու: Գործառնութեան այս միջոցը կը գործածուէր տարիներ. եւ ուստի այս նորակազմ ընկերութեան կը մնար այս չարիքը բառնալ:

Ծանուցումն էր դարձանը:

Շուկան ընդարձակելու համար արեւելքի նահանգներէն ծանուցում ընող ընկերութեան մը հետ կարգադրեցինք եւ սկսանք գործի: Ընկերութիւնը առաջին պահուն չամիչին այս տեսակին անուն դրաւ «BEAR BRAND», որը յետոյ փոխուեցաւ «SUN MAID»ի:

Այս փորձը արդարացաւ, որովհետեւ հակառակ այն իրողութեան որ ամէն տարի 20 առ հարիւր արտադրութիւնը կը շատնար, բայց հին բերքը նորին չէր խառնուեր, կը ծախուէր:

Այս պայմանագրութիւնը կնքուեցաւ այգեպանին եւ ընկերութեան միջեւ երեք տարուան պայմանաժամով: 1913—14—15 եւ 1916—17ին հունձքն ալ զննելու արտօնութիւնով:

Ուրիշ իրողութիւն մը այս շրջանին երեւան եկաւ, այգեպաններու թիւը կը նուազէր, կամ էյքըրի քանակը քիչ էր. հետեւեալ պատճառներով: Պայմանագիրը ըստօրագրողը կը ծախէր այգին եւ նոր գնողը ընկերութեան մէջ չէր. երկրորդ նոր այգիներ կը տնկուէին Ընկերութենէն դուրս: Ասով հունձքին տոկոսը մեծ մասամբ ընկերութեան ձեռքը չէր: Ընկերութիւնը 1915ին որոշեց քէմիէյն մը ընել գոնէ 15,000 էյքըր աւելի արձանագրելու: 1916 Ապրիլին անցաւ քէմիէյնը եւ ունեցանք 45,533 էյքըր աւելի, փոխանակ 15000ի: Այսպէսով գնեցինք նաեւ 1916—17ի բերքն ալ, եւ ասով Ընկերութիւնը բացարձակապէս անկախ եւ զօրաւոր եղաւ:

1917ի նոր պայմանագրութեան քէմիէյնին որոշեցինք գործը չը շարունակել մինչեւ որ ձեռքի տակ ունենանք 125,000 էյքըր: Այս ձեռնարկին արդիւնքը եղաւ 131,500 էյքըր: Նահանգին ծայրագոյն հարաւէն հիւսիս, Սէն Տիէկոյէն Սըթթըր Գառնթի անդամակցեցան եւ ամբողջ բերքին 88 առ հարիւրը մեր ձեռքը մնաց: Անսպասելի յաջողութիւն:

Ընկերութեան դէմ սկսպտիկ եւ հակառակորդներ ամօթահար եղան եւ ղեմեցին ընկերակցելու համար:

էյքըրներու այս քանակը պահելու համար, նոր պայմանագրութեան վրայ յաւելում եղաւ, որ ներկայ ստորագրող այգեպանը եթէ ծախէ այգին, պէտք է հաստատուն կալուածքը ենթակայ մնայ պայմանին:

Դժբաղդաբար նկատելով թէ ոմանք հակառակ իրենց խոստման եւ ստորագրութեան սկսան չամիչը դուրսն ալ ծախել, ուստի ստիպուեցանք յօդուած մըն ալ աւելցնել տուգանք պահանջելով, որ էր իւրաքանչիւր դուրս ծախուած թընի վրայ \$40 վճարել, եւ եթէ դատավարութիւն տեղի ունենար փաստաբանական ու դատաստանական ծախքերը:

Այգեպանին ընթացիկ ծախուց դիւրութեան համար Ընկերութիւնը կանխավճար մը կ'ընէր եւ յետոյ մաս առ մաս կը վճարէր մինչեւ տարեվերջը ամբողջ հաշիւը կը փակուէր:

Ընկերութեան ընթացիկ ծախուց, բաժնետէրերու շահ 8 առ հարիւրի եւ պահեստի դումարի համար իւրաքանչիւր թընի \$5 դանձելէ վերջ հաշիւը փակուած կը նկատուէր:

Ամէն թընի \$5 դանձելով կը հոգացուէր վարչական ծախքերը եւ աւելցածը պահեստի դումարին կը յատկացուէր, այն է յաջորդ տարի այգեպանին կանխավճարին մէկ մասը հոգալու:

Այս պայմանագրութեան մէջ նաեւ աւելցաւ յօդուած մը, որով այգեպանը կը յօժարէր պահեստի դումարին մէջ իրեն բաժին դրամէն \$4 իւրաքանչիւր թընէ ետ ձգէր, փոխարէն Ընկերութեան բաժին դնէր:

Այս յօդուածը վերանորոգուեցաւ նաեւ 1921 պայմանագրութեան մէջ ալ:

Չամիչի արտագրութեան այս համառօտ պատմութիւնը ընելէ վերջ, հիմա դառնանք Ընկերութեան այս հսկայաքայլ յաջողութեան նախանձողներու, կամ իրենց շահը ասոր կազմութեամբ վնասուողներու ձեռնարկներուն:

Անհատ կամ ընկերութիւններ, որոնք եռեսուն տարիներէ ի վեր այգեպանին աննկարագրելի զրկումին մէջ փնտուր էին իրենց քսակներուն պարարտութիւնը, եւ ընկերակցութեան այս համագործակցութիւնը զրկեց զիրենք այդ միջոցներէն, անշուշտ հանգիստ պիտի չնստէին տեղերին: Գործի սկսան: Հրապարակի վրայ կ'ամրաստանէին Ընկերութիւնը իրր **RAISIN TRUST**: Ընկերութիւնը այս ամրաստանութեանց տեղի չը տուաւ իր գործին պարապեցաւ, այգեպանին շահը նկատի ունէր. եւ կը ջանար համագործակցութեան դադարիւրը աւելի եւ աւելի զօրացընել, որովհետեւ անցելոյն այս օրինակ կազմակերպութեանց անյաջողութեան մէջ մեծ դեր կատարեր էր այս ոգիին բացակայութիւնը:

Ընկերութիւնը օրինական սահմանին մէջ էր, իր **SUN MAID** չամիչը կը ծախէր:

Դիմումներ եղան Ընկերութեան որ մրցակից ուրիշ ընկերութիւններու ալ չամիչ տայ, եւ անոնք իրենց Թրէյտ Մարքովը ծախեն: Ընկերութիւնը մերժեց այս դիմումները, այն երկու պատճառով որ, ասիկա մըրցակիցներու առիթը պիտի տար ի հեծուկս Ընկերութեան գին կոտրէին, ինչպէս միշտ ըրեր էին անցելոյն մէջ. երկրորդ այգեպանը իր չամիչը ծախելու համար համագործակցութեան անհրաժեշտութիւնը պիտի չըմբռնէր, եւ այսու այս Ընկերութիւնը չպիտի կրնար իր նպատակին հասնիլ, որ էր համագործակցութեամբ փրկել այգեպանը զրկող շահամուլ ընկերութեան զոհ ըլլալէ:

Ընկերութիւնը հակառակորդներուն եւ ոչ մէկ կերպով պատեհութիւն տուաւ իրենց ամրաստանութեանց փաստ գտնելու, այլ խուսափեցաւ այն ամէն կերպերէն, որոնք եթէ ոչ ոգիով գէթ ձեւով կրնար օ-

րէնքի հակառակ նկատուիլ:

Ամերիկա՝ համաշխարհային պատերազմին մտնելէ վերջ ապրանքի գինը բարձրացաւ զգալապէս. բայց Ընկերութիւնը չամիչին գինը պահեց իր օրինաւոր մակարդակին վրայ: Պատերազմը լմննալէ վերջ, երբ Ամերիկեան եւ Եւրոպական շուկան բոլորովին դատարկուած էր, եւ երբ այս շուկաները միայն Քալիֆորնիոյ նայեցան չոր պտուղի համար. ու երբ ամէն ուրիշ պտուղներու գինը բարձրացաւ չամիչն ալ հետեւեցաւ անոնց:

Աս ալ չէ թէ անշուշտ հետեւեցանք ուրիշներու, այլ արտադրութեան ծախքերը այնչափ շատցան, որ կարելի չէր չամիչ արտադրել սովորական գներով ծախելովը:

Այս ատեններն էր նաեւ որ Սահմանադրութեան 18րդ յաւելումը (գինեհատութեան) վրայ կուգար, եւ ասիկա անշուշտ աւելի լաւ պատեհութիւն մը կը ստեղծէր չամիչի սպառումին համար: Պահանջ ու Մատուցումի օրէնքը չէր կրնար անտեսուիլ: 1919ին էր որ Ընկերութիւնը չամիչի գինը վերցուց 10 սէնթի փառնտը:

Տրտունջներ, գանգատներ, զրպարտութիւններ, այս Ընկերութեան դէմ հրապարակը ողողեր էին, առանց սակայն մեզ վնասելու: Մեր հակառակորդները այս ձրի ամրաստանութենէն դուրս ելան եւ Միացեալ Նահանգաց կառավարութեան գիմեցին 1920ի դարնան, որը դատ բերաւ այս Ընկերութեան դէմ:

Դատին բնոյթը երկուք էր. ամրաստանուած էր Ընկերութիւնը իրր մենապաճառութիւն ձեռք բերելու համար կազմուած, եւ թէ իր անդամները սպառնալիքի եւ բռնութեան տակ անդամակցած էին:

Նոյն տարուան մինչեւ Յուլիս ամիսը Ընկերու-

թիւներ յաջողեցաւ ինքզինք արդարացնել մենավաճառութեան ամբաստանութենէն: Միայն կառավարութիւնը 10 սէնթ փառնտը չամիւլին գինը արդարանալի չգտաւ:

Այդ եւ ասկից աւելին ալ արդարանալի գիններ են հաստատելու համար Օգոստոսին 150 քառլօտ չամիւլ զրկուեցաւ Նիւ Եորքի շուկան եւ անուրդով ծախուեցաւ: Ժողովուրդը ինք տուաւ 22 սէնթ իւրաքանչիւր փառնտի: Կառավարութեան անարդարանալի սեպած գնէն 8 սէնթ աւելի, կամ գրեթէ կրկնապատիկն էր ասիկա:

Ոչ մէկ օրէնք կրնայ ազդել ժողովուրդի կամքին, եւ կամ Պահանջ եւ Մատուցումի անխուսափելի օրէնքին:

Երկար խորհրդակցութենէ վերջ Ընկերութիւնը 1920ի բերքին համար որոշեց 15 սէնթ գին, նկատելով թէ այդեպանը պէտք է օգտուի պատեհութենէն, մանաւանդ նկատելով թէ միջնորդներ արդէն խոշոր շահ մը պիտի ընեն:

1920 Սեպտեմբերի մէջ ընդհանուր դատախազը դատ բերաւ Ընկերութեան դէմ, պահանջելով կազմալուծում, այն պատճառով որ իրր թէ այս կազմակերպութիւնը Շքմըն Էքթի հակառակ է: Դատավարութեան ընթացքին ապացուցուեցաւ թէ այդ չէ իրողութիւնը: Կառավարութիւնը մէկ կասկածելի կէտ գրտաւ, այն էր թէ դրսիներու երբեք չամիւլ չծախել, կրնար ապագային առիթը ընծայել որ այս Ընկերութիւնը ամբողջ շուկային տիրանայ եւ իր ուղած գինը առնէ:

Ուստի որոշուեցաւ որ 20,000 թրն դրսի փէքրին ալ տանք, թրնին \$5 շահ մը թողլով իրենց: Ինչ որ ըրինք:

1917 պայմանագրութիւն ալ չեղեալ նկատենք, որովհետեւ ամբաստանուած էինք թէ բռնութեան եւ սպառնալիքի տակ միացեր էին մեր անդամներ:

Ասոր ալ անվաւեր ըլլալը ապացուցանելու համար բոլոր պայմանագրութիւնները վերադարձուցինք եւ նոր պայմանագրութիւնները ստորագրուեցաւ, նախորդէն շատ աւելի մեծ թիւով: Այսպէսով Ընկերութեան փաստարանները առաջարկ բերին այս դատը փակուած նկատելու, որ դատարանական յաղթանակ մըն էր Ընկերութեան համար:

Թէեւ դատաւորը կը տեղեկացնէր Միացեալ Նահանգաց ընդհանուր դատախազին թէ այս դատին մէջ լուսարանուելիք կէտեր կան եւ պէտք է բաց մնայ ապագայ հաւանական դատավարութեան համար:

Այսպէսով փակուեցաւ դատական այս հարցը:

Քանի մը փոփոխութիւններ եղան նոր պայմանագրութեան մէջ: Օրինակ՝ 1917ի քոնթրաքթի մէջ Ընկերութիւնը 3 մէկ երրորդ սէնթ իւրաքանչիւր փառնտի պիտի վճարէր իրր կանխավճար. նոր քոնթրաքթը 4 սէնթ որոշեց:

Ընկերութեան չյանձնողներ իւրաքանչիւր թրնի \$40 տուգանք պիտի վճարէին, նորին մէջ \$60 որոշուած է:

Լաւագոյն ապրանքի վրայ $1\frac{1}{2}$ սէնթէն աւելի վճարել, եւ նուազեցնել ըստ որակի:

Առջի պայմանագրութեամբ Ընկերութիւնը արտօնութիւնը (օփշըն) ունէր երկարաձգելու պայմանագրութեան պայմանաժամը, նորին մէջ երկուստեք թէ այդեպան եւ թէ Ընկերութիւն, պայմանաժամը լրանալէն երեսուն օր առաջ գրաւոր տեղեկութիւններ կրնան հաղորդել իրարու:

Նոր պայմանագրութիւնը տասն եւ հինգ տարուան

աւելորդութիւն մը ունի, բայց ամէն երեք տարին այգեպանն ու Ընկերութիւնը վերոյգրեալ փոխադարձ գրաւոր տեղեկութիւններ հաղորդելով կրնան ազատ նկատուիլ: Այգեպանը այս իրաւունքը կրնայ գործադրել, 1923 Դեկտ. 20—31, եւ ամէն երեք տարին Ընկերութիւնը իր այս իրաւունքը կրնայ գործադրել — 1924 Փետր. 20էն Մարտ 1. եւ ամէն երեք տարի յաջորդաբար:

1921ին Ընկերութիւնը 10,700 այգեպաններու անդամակցութիւն մը կամ 88 առ հարիւր ունէր: Այս տուտը գոհացուցիչ էր եւ Ընկերութիւնը նկատելով թէ իր շուկայի հրապարակը ընկիւք գործին աւելի զօրաւոր ազդակը կը նկատէ ասկից աւելի թիւ մը, ուստի 1921 Փետրվարին երբ քէմիէյնը սկսաւ շատ զօրաւոր թափով յառաջ գնաց, ու երբ Ապրիլ 1ին փակուեցաւ եւ խնդրանքով երկու շաբաթ ալ շարունակուեցաւ արդիւնքը արդարացուց թէ 13,000 այգեպաններ ընկերակցած եւ արտադրութեան 93 առ հարիւրը ասլահովուած էր:

Ընկերութիւնը ինքզինքը աւելի զօրաւոր զգաց քան երբեք, որովհետեւ այս արդիւնքը ջնջեց կառավարութեան բերած առարկութիւնները, ինչպէս նաեւ գոցեց մեր հակառակորդներու բերանները եւ այգեպանը մի անգամ ընդմիջտ արտայայտեց իր բացարձակ վստահութիւնը իր ընկերութեանը վրայ:

1921ի տարւոյն ընթացքին կառավարական սլաշտօնէից եւ Ընկերութեան միջեւ յաւէտ բարեկամական շատ խորհրդակցութիւններ տեղի ունեցան, որոնցմէ որոշ տեսնուեցաւ թէ կառավարութիւնը երբեք չի առարկեր այգեպանին իր արտադրութիւնը իր համագործակցութեամբը ծախելուն, հերիք է որ կառավարական օրինաց հակառակի, Ընկերութիւնն ալ վստա-

2013

11185

ՀՀ Ազգային գրադարան



NL0083993

